ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.07.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ

քննող անձի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/92

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 26.06.2018թ. թիվ 03/26-3/11653-18 գրությամբ «Վիկտոր Ջլավյան Ռաֆիկի» Ա/Ձ-ին /ՀՎՀՀ 83353874/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի «Թիվ 20 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի 25.06.2018թ. թիվ 223 գրության հիման վրա, 26.06.2018թ. նախաձեռնել է «Վիկտոր Ջլավյան Ռաֆիկի» Ա/Ձ-ին (այսուհետ՝ նաև Ա/Ձ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

2. «Թիվ 20 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Թիվ 20 պոլիկլինիկա» ՓԲԸ-ն (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 25.06.2018թ. թիվ 223 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի «Թիվ 20 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «Թ 20 ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-2018/4/15/16/ՀԲ-1» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգին հայտ է ներկայացրել «Վիկտոր Ջլավյան Ռաֆիկի» Ա/Ձ-ն: Գնահատող հանձնաժողովի 2018թ. հունիսի 6-ի թիվ 4 որոշմամբ N 8 չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Վիկտոր Ջլավյան Ռաֆիկի» Ա/Ձ-ն: Մասնակիցներին տրամադրվել է եռօրյա ժամկետ հրավերով նախատեսված՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից համապատասխան փաստաթղթերը ներկայացնելու պահանջով: Սահմանված ժամկետից հետո ակնհայտ է դարձել, որ «Վիկտոր Ջլավյան Ռաֆիկի» Ա/Ձ-ի կողմից 8-րդ չափաբաժնով առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով նախատեսված ապրանքի բնութագրին, և, հաշվի առնելով այն հանգամանքը, որ մասնակցի կողմից առաջարկված ապրանքը անհամադրելի է համապատասխան սարքավորմանը, և կխաթարվի պոլիկլինիկայի բնականոն աշխատանքը, մասնակցին օրենսդրությամբ սահմանված կարգով ծանուցվել է մեկ աշխատանքային օրում անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ: Վերջինս սահմանված ժամկետում նշված անհամապատասխանությունները չի շտկել, և գնահատող հանձնաժողովը փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացրել 8-րդ չափաբաժնի մասով հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցին:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ մասնակիցը հավաստել է, որ իր կողմից ներկայացված՝ առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերին համապատասխանելու մասին տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը, խնդրում ենք համապատասխան գործընթաց նախաձեռնել «Վիկտոր Ջլավյան Ռաֆիկի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով»:

Պատվիրատուն ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. «Վիկտոր Ջլավյան Ռաֆիկի» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Վիկտոր Ջլավյան Ռաֆիկի» Ա/Ձ-ն Բողոքներ քննող անձին 26.06.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

««Վիկտոր Ջլավյան Ռաֆիկի» Ա/Ձ-ն (այսուհետ՝ նաև Ա/Ձ) մասնակցության հայտ է ներկայացրել «Թիվ 20 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից հայտարարված «Թ 20 ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-2018/4/15/16/ՀԲ-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ):

«Վիկտոր Ջլավյան Ռաֆիկի» Ա/Ձ-ն հայտ է ներկայացրել 1-5,8,27,32,35-38,41-րդ չափաբաժինների մասով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.06.2018թ. հայտերի բացման նիստի թիվ 2 արձանագրության 3.5-րդ կետի համաձան՝ «Վիկտոր Ջլավյան Ռաֆիկի» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտում առկա են պահանջվող փաստաթղթերը և կազմված են հրավերով նախատեսված վավերապայմաններին համապատասխան:

Գնահատող հանձնաժողովի 06.06.2018թ. նիստի թիվ 4 որոշմամբ «Վիկտոր Ջլավյան Ռաֆիկի» Ա/Ձ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ 8-րդ չափաբաժնի մասով:

Գնահատող հանձնաժողովի 15.06.2018թ. թիվ 5 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «Վիկտոր Ջլավյան Ռաֆիկի» Ա/Ձ-ի հայտը մերժվել է:

Որպես մերժման պատճառաբանություն գնահատող հանձնաժողովը նշել է հետևյալը. «... N 8 չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած «Վիկտոր Ջլավյան Ռաֆիկի» Ա/Ձ-ի կողմից առաջարկվող բնութագիրը գնահատվեց ոչ համարժեք պատվիրատուի կարիքներին, մասնավորապես մասնակցի կողմից առաջարկվող ապրանքը չի կարող

օգտագործվել համապատասխան սարքավորման բացակայության և արդեն իսկ եղած սարքավորումը անհիմն անգործության մատնելու օբյեկտիվ պատճառներից ելնելով:

«Վիկտոր Ջլավյան Ռաֆիկի» Ա/Ձ-ին օրենքով սահմանված կարգով փաստաթղթերի ներկայացման պահանջ ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդ օրը (13.06.2018թ.) ծանուցվել է արձանագրված անհամապատասխանության շտկման վերաբերյալ, սակայն Ա/Ձ-ի կողմից 14.06.2018թ. ներկայացված պարզաբանմամբ նշվել է այն մասին, որ իր կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը չի կարող համարժեք լինել «Թ 20 ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-2018/4/15/16/ՀԲ-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 8-րդ չափաբաժնով սահմանված տեխնիկական բնութագրին, մասնավորապես, հրավերով սահմանվել է «Արյան մեջ գլյուկոզի մակարդակի որոշման թեստ երիզ Ակկու-Չեք Պերֆորմա գլյուկոմետրի համար», իսկ իր կողմից առաջարկվել է «Ստրիպ Սատելիտ էքսպրես N 50 Սատելլիտ էքսպրես գլյուկոմետրի համար», և անհատույց տրամադրել Սատելիտ էքսպրես գլյուկոմետրեր՝ անհայտ քանակությամբ»:

14.06.2018թ. Մասնակիցը տեխնիկական բնութագրի պարզաբանման վերաբերյալ գրությամբ հայտնել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին հետևյալը. «...Հայտնում եմ Ձեզ, որ մեր կողմից առաջարկված սատելիտ էքսպրես թեստ երիզների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են մեր կողմից առաջարկվող «Ստրիպ Սատելիտ էքսպրես N 50» թեստ երիզներին և նախատեսված են Սատելիտ էքսպրես գլյուկոմետրի համար, ուստի տեխնիկական բնութագիրը չի կարող համապատասխան լինի Ակկու-Չեք Պրեֆորմայի: Ուստի, ձեռնարկությունն իր իսկ կողմից «Թիվ 20 պոլիկլինիկա» ՓԲԸ-ին տրամադրում է Սատելիտ էքսպրես սարքերը՝ օգտագործելու համար»:

Ա/Ձ-ն գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.06.2018թ. թիվ 5 արձանագրությունը կազմված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) պահանջների խախտմամբ, հետևաբար այն ենթակա է փոփոխման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ նույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝ պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին

համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ:

Նույն մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ կետերի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Վերը նշված իրավական նորմերի տառացի մեկնաբանության և համակարգային վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ օրենսդիրը սահմանելով գնման նպատակները, հստակ սահմանել է, որ այն պետք է ուղղված լինի կոնկրետ անհրաժեշտության բավարարման համար: Դատելով «Թ 20 ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-2018/4/15/16/ՀԲ-1» ծածկագրով ընթացակարգի 8-րդ չափաբաժնով պահանջվող ապրանքի առանձնահատկությունից կարելի է փաստել, որ այն ձեռք բերելը հետապնդում է արյան մեջ գլյուկոզի մակարդակի (քանակի) որոշման նպատակ: Մասնակցի կողմից առաջարկվող ապրանքն ամբողջովին բավարարում է տվյալ պահանջը, ինչ վերաբերվում է գնահատող հանձնաժողովի այն պատճառաբանությանը, որ Մասնակցի կողմից առաջարկվող ապրանքը չի կարող օգտագործվել առանց համապատասխան սարքերի, ապա դա անհիմն է, քանի որ, ինչպես նաև նշված է որոշման մեջ, Մասնակիցը հայտնել է, որ անհատույց կարող է տրամադրել համապատասխան սարքեր: Գնահատող հանձնաժողովի այն պատճառաբանությունը, որ առկա սարքերը կմատնվեն անգործության ևս անհիմն է, քանի որ դրանից Պատվիրատուն որևէ վնաս չի կրում:

ՀՀ Սահմանադրության 59-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են Օրենքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է:

Տվյալ պարագայում «Վիկտոր Ջլավյան Ռաֆիկի» Ա/Ձ-ն շահույթ ստանալու ակնկալիքով մասնակցության հայտ է ներկայացրել, սակայն գնահատող հանձնաժողովի ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում զրկվել է այն նյութական բավարարման հասնելու օրինական հնարավորությունից, ինչի ակնկալիքով վերջինս մասնակցել է Պատվիրատուի կողմից հայտարարված գնանշման հարցման ընթացակարգին»:

«Վիկտոր Ջլավյան Ռաֆիկի» Ա/Ձ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել թիվ «Թ 20 ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-2018/4/15/16/ՀԲ-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել 15.06.2018թ. N 5 արձանագրությունը փոփոխելու վերաբերյալ որոշում, այն է՝ 8-րդ չափաբաժնի մասով «Վիկտոր Ջլավյան Ռաֆիկի» Ա/Ձ-ին ճանաչել ընտրված մասնակից և ընդունել վերջինիս հետ պայմանագիր կնքելու որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 28.06.2018թ. գրությամբ Մասնակիցը ներկայացրել է բողոքի պահանջի լրացում, այն է՝

- Պարտավորեցնել թիվ «Թ 20 ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-2018/4/15/16/ՀԲ-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել 15.06.2018թ. N 5 արձանագրությունը փոփոխելու վերաբերյալ որոշում, այն է 8-րդ չափաբաժնի մասով «Վիկտոր Ջլավյան Ռաֆիկի» Ա/Ձ-ի հայտը գնահատել բավարար.
- Պարտավորեցնել թիվ «Թ 20 ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-2018/4/15/16/ՀԲ-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել 15.06.2018թ. N 5 արձանագրությունը փոփոխելու վերաբերյալ որոշում, այն է 8-րդ չափաբաժնի մասով «Վիկտոր Ջլավյան Ռաֆիկի» Ա/Ձ-ին ճանաչել ընտրված մասնակից.
- Պարտավորեցնել թիվ «Թ 20 ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-2018/4/15/16/ՀԲ-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել 20.06.2018թ. N 6 արձանագրությունը փոփոխելու վերաբերյալ որոշում, այն է՝ 8-րդ չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Վիկտոր Ջլավյան Ռաֆիկի» Ա/Ձ-ին:

Ընթացակարգի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստին մասնակցում էր «Վիկտոր Ջլավյան Ռաֆիկի» Ա/Ձ-ի տնօրեն Վիկտոր Ջլավյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/92 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 26.06.2018թ. թիվ 03/26-3/11653-18 գրությունը և կից փաստաթղթերը, «Թիվ 20 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի 25.06.2018թ. թիվ 223 գրությունը, «Թ 20 ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-2018/4/15/16/ՀԲ-1» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «Թ 20 ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-2018/4/15/16/ՀԲ-1» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 01.06.2018թ. նիստի թիվ 2, 04.06.2018թ. նիստի թիվ 3, 06.06.2018թ. նիստի թիվ 4 և 15.06.2018թ. նիստի թիվ 5 արձանագրությունները, Բողոքներ քննող անձի 12.07.2018թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/72 որոշումը.

Բողոքներ քննող անձը՝ քննելով «Վիկտոր Ջլավյան Ռաֆիկի» Ա/Ձ-ի կողմից 26.06.2018թ. ներկայացված բողոքը, 12.07.2018թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/72 որոշմամբ վերը նշված բողոքը մերժել է:

Բողոքներ քննող անձի ԳԲԽ-ԱՄ-2018/72 որոշմամբ արձանագրվել է հետևյալը.

« ԳԲԽ-ԱՄ-2018/72 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Թիվ 20 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից «Թիվ 20 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի, բժշկական պարագաների և քիմիական նյութերի ձեքբերման նպատակով կազմակերպվել է «Թ 20 ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-2018/4/15/16/ՀԲ-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով Ա/Ձ Վիկտոր Ջլավյանը հայտ է ներկայացրել:

2. Ընթացակարգի հրավերով 8-րդ չափաբաժնով նախատեսվել է ձեռքբերել արյան մեջ գլյուկոզի մակարդակի որոշման թեսթ երիզ Ակկու-Չեք Պերֆորմա գլյուկոմետրի համար, որի համար նախատեսվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

«Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը՝ 8, անվանումը և ապրանքային նշանը՝ արյան մեջ գլյուկոզի մակարդակի որոշման թեսթ երիզ, Ակկու-Չեք Պերֆորմա գլյուկոմետրի համար, տեխնիկական բնութագիրը՝ Արյան մեջ գլյուկոզի մակարդակի որոշման թեսթ երիզ Ակկու-Չեք Պերֆորմա գլյուկոմետրի համար: Օրիգինալ: Նմուշի տեսակը՝ մազանոթային արյուն: Չափման մեթոդը՝ էլեկտրոքիմիական: Չափման միջակայքը՝ 0,6-33,3մմոլ/լ: Չափման ժամանակահատվածը՝ 5վրկ: Արյան ծավալը՝ 0,6 մկլ: Չափում է հեմատոկրիտ 10-65% միջակայքում: Համակարգը կալիբրավորված է ըստ երակային արյան, որը հիմնված է հեքսոկինազային մեթոդի վրա և համապատասխանում է NIST չափորոշիչին: Ֆերմենտը՝ Mut.Q-GDH 2 կայուն թթվածնի ազդեցության հանդեպ: Աշխատանքային ջերմաստիճան՝ 8-44°C: Աշխատանքային հարաբերական խոնավություն՝ 10-90%: Ճշգրտությունը՝ համակարգը համապատասխանում է EN-ISO 15197 ստանդարտի պահանջներին: Թեստ երիզի ժամկետը՝ պետք է չփոխվի անկախ սրվակի բացման պայմանից: Ֆորմատ-հատ: Որակի սերտիֆիկատի/ների առկայությունը պարտադիր է:»:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 06.06.2018թ. ժամը 13:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ կետով կայացված որոշմամբ Ա/Ձ Վիկտոր Ջլավյանը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ Ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով, որին 07.06.2018թ. սահմանված կարգով ծանուցվել է Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.06.2018թ. ժամը 16:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետով արձանագրվել է, որ Ա/Ձ Վիկտոր Ջլավյանի կողմից առաջարկվող տեխնիկական բնութագիրը ոչ համարժեք է պատվիրատուի կարիքներին: Նույն արձանագրության համաձայն՝ Մասնակցին 13.06.2018թ. ծանուցվել է արձանագրված անհամապատասխանության շտկման վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից 14.06.2018թ. ներկայացված պարզաբանմամբ նշվել է այն մասին, որ իր կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը չի կարող համարժեք լինել Ընթացակարգի 8-րդ չափաբաժնով սահմանված տեխնիկական բնութագրին, մասնավորապես հրավերով սահմանվել է արյան մեջ գլյուկոզի մակարդակի որոշման թեսթ երիզ Ակկու-Չեք Պերֆորմա գլյուկոմետրի համար, սակայն Մասնակցի կողմից առաջարկվել է Ստրիպ

ՍԱՏԵԼԻՏ էքսպրես N 50 Սատելիտ գլյուկոմետրի համար և անհատույց տրամադրել Սատելիտ էքսպրես գլյուկոմետր անհայտ քանակությամբ: Հրավերով այլ արտադրության գլյուկոմետրերի պահանջ չի սահմանվել, այլ սահմանվել է պատվիրատուի մոտ առկա գլյուկոմետրերի օգտագործման համար անհրաժեշտ թեսթերի ձեռքբերում:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.06.2018թ. ժամը 16:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետով կայացված որոշմամբ Ա/Ձ Վիկտոր Ջլավյանի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Ա/Ձ Վիկտոր Ջլավյանի 26.06.2018թ. բողոքը, «Թիվ 20 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի 28.06.2018թ. թիվ 229 գրությունը և կից փաստաթղթերը, «Թ 20 ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-2018/4/15/16/ՀԲ-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը, գտնում եմ, որ Ա/Ձ Վիկտոր Ջլավյանի 26.06.2018թ. բողոքն անհիմն է և ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատաս-խանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետը սահմանում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ

կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Նույն կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«Թիվ 20 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից «Թիվ 20 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի, բժշկական պարագաների և քիմիական նյութերի ձեքբերման նպատակով կազմակերպվել է «Թ 20 ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-2018/4/15/16/ՀԲ-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի 8-րդ չափաբաժնով նախատեսվել է ձեռք բերել արյան մեջ գլյուկոզի մակարդակի որոշման թեսթ երիզ Ակկու-Չեք Պերֆորմա գլյուկոմետրի համար, որի համար նախատեսվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

«Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը՝ 8, անվանումը և ապրանքային նշանը՝ արյան մեջ գլյուկոզի մակարդակի որոշման թեսթ երիզ, Ակկու-Չեք Պերֆորմա գլյուկոմետրի համար, տեխնիկական բնութագիրը՝ Արյան մեջ գլյուկոզի մակարդակի որոշման թեսթ երիզ Ակկու-Չեք Պերֆորմա գլյուկոմետրի համար: Օրիգինալ: Նմուշի տեսակը՝ մազանոթային արյուն: Չափման մեթոդը՝ էլեկտրոքիմիական: Չափման միջակայքը՝ 0,6-33,3մմոլ/լ: Չափման ժամանակահատվածը՝ 5վրկ: Արյան ծավալը՝ 0,6 մկլ: Չափում է հեմատոկրիտ 10-65% միջակայքում: Համակարգը կալիբրավորված է ըստ երակային արյան, որը հիմնված է հեքսոկինազային մեթոդի վրա և համապատասխանում է NIST չափորոշիչին: Ֆերմենտը՝ Mut.Q-GDH 2 կայուն թթվածնի ազդեցության հանդեպ: Աշխատանքային ջերմաստիճան՝ 8-44°C: Աշխատանքային հարաբերական խոնավություն՝

10-90%: Ճշգրտությունը՝ համակարգը համապատասխանում է EN-ISO 15197 ստանդարտի պահանջներին: Թեստ երիզի ժամկետը՝ պետք է չփոխվի անկախ սրվակի բացման պայմանից: Ֆորմատ-հատ: Որակի սերտիֆիկատի/ների առկայությունը պարտադիր է:»:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Վիկտոր Ջլավյանը, ով հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «Թ 20 ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-2018/4/15/16/ՀԲ-1» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հայտարարության համաձայն՝ Ա/Ձ Վիկտոր Ջլավյանը պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «Թ 20 ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-2018/4/15/16/ՀԲ-1» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Մասնակիցը հայտի թիվ 5 հավելվածով Ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով գնային առաջարկը ներկայացրել է «արյան մեջ գլյուկոզի մակարդակի որոշման թեսթ երիզ սատելլիտ էքսպրես համարժեք արյան մեջ գլյուկոզի մակարդակի որոշման թեսթ երիզ Ակկու-Չեք Պերֆորմայի» համար:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 06.06.2018թ. ժամը 13:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ կետով կայացված որոշմամբ Ա/Ձ Վիկտոր Ջլավյանը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ Ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով, որին 07.06.2018թ. սահմանված կարգով ծանուցվել է Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Մասնակցի կողմից հայտի 6.1 հավելվածով ներկայացվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

«Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը՝ 8՝ անվանումը և ապրանքային նշանը՝ Ստրիպ ՍԱՏԵԼԻՏ էքսպրես N 50 + գլյուկոմետր Սատելլիտ էքսպրես, տեխնիկական բնութագիրը՝ Նմուշի տեսակը՝ մազանոթային արյուն, չափման միջակայքը 0.6-4.2 մմոլ/լ, արյան ծավալը 1-2 մկլ

Կալիբրացիա համակարգը կալիբրավորված է ըստ երակային արյան, որը հիմնված է հեքսոկինազային մեթոդի վրա և համապատասխանում է NIST չափորոշիչին: Անզեն աչքով ստուգելու հնարավորություն: Բացակայում է մալթոզի էական միջամտությունը գլյուկոզի արդյունքների վրա բացառելով գլյուկոզի կեղծ բարձր, պահպանման ջերմաստիճանը --- 20+30 C, գործառնական բարձրություն մինչև 4000մ ծովի մակարդակից (MicroB) ճշգրտությունը մակարդակից (MicroB) ճշգրտությունը՝ համակարգը համապատասխանում է EN ISO 15197 չափորոշիչին»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.06.2018թ. ժամը 16:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ Ա/Ձ Վիկտոր Ջլավյանի կողմից առաջարկվող տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին և ոչ համարժեք է պատվիրատուի կարիքներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 13.06.2018թ. ծանուցել է Ա/Ձ Վիկտոր Ջլավյանին՝ հայտնելով, որ Մասնակցի կողմից 8-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքը համարժեք չէ «Թ 20 ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-2018/4/15/16/ՀԲ-1» ծածկագրով գնման ընթացակարգի պահանջներին, մասնավորապես՝ հրավերով պահանջվում է արյան մեջ գլյուկոզի մակարդակի որոշման թեսթ երիզ Ակկու-Չեք Պերֆորմա գլյուկոմետրի համար, սակայն Մասնակցի կողմից առաջարկված Ստրիպ ՍԱՏԵԼԻՏ էքսպրես N 50-ը նախատեսված չէ Ակկու-Չեք Պերֆորմա գլյուկոմետրերի համար, իսկ հավելյալ սարքավորման պահանջ ընթացակարգով նախատեսված չի եղել:

Նշված ծանուցմամբ Մասնակցին առաջարկվել է մեկ աշխատանքային օրյա ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Պատվիրատուին ուղղված գրությամբ Ա/Ձ Վիկտոր Ջլավյանը հայտնել է, որ Մասնակցի կողմից առաջարկված սատելիտ էքսպրես թեսթ երիզների տեխնիկական բնութագրերը, համապատասխանում են Ա/Ձ Վիկտոր Ջլավյանի կողմից առաջարկվող

Ստրիպ ՍԱՏԵԼԻՏ էքսպրես N 50 թեսթ երիզներին և նախատեսված են ՍԱՏԵԼԻՏ էքսպրես գլյուկոմետրի համար, ուստի տեխնիկական բնութագիրը չի կարող համապատասխան լինել Ակկու-Չեք Պերֆորմայի համար:

Նույն գրությամբ Մասնակիցը հայտնել է, որ ձեռնարկությունը իր կողմից «Թիվ 20 պոլիկլինիկա» ՓԲԸ-ին տրամադրում է ՍԱՏԵԼԼԻՏ էքսպրես սարքերն օգտագործելու համար:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.06.2018թ. ժամը 16:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ Ա/Ձ Վիկտոր Ջլավյանի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է, այն հիմնավորմամբ, որ Մասնակցի կողմից առաջարկված ապրանքը համարժեք չէ հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված գնման առարկային, ինչպես նաև հրավերով այլ արտադրության գլյուկոմետրերի պահանջ չի սահմանվել, այլ սահմանվել է պատվիրատուի մոտ առկա գլյուկոմետրերի օգտագործման համար անհրաժեշտ թեսթերի ձեռքբերում:

Այսպիսով՝ Ընթացակարգի հրավերի 8-րդ չափաբաժնի մասով նախատեսվել է ձեռք բերել Ակկու-Չեք Պերֆորմա գլյուկոմետրի համար նախատեսված արյան մեջ գլյուկոզի մակարդակի որոշման թեսթ-երիզներ՝ 5000 հատ: Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած Ա/Ձ Վիկտոր Ջլավյանը հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «Թ 20 ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-2018/4/15/16/ՀԲ-1» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին: Միևնույն ժամանակ Մասնակցի կողմից հայտի թիվ 6.1 հավելվածով ներկայացվել է Ստրիպ ՍԱՏԵԼԻՏ էքսպրես N 50 թեսթ երիզների տեխնիկական բնութագիրը, որոնք նախատեսված են ՍԱՏԵԼԻՏ էքսպրես գլյուկոմետրի համար և ունեն այլ տեխնիկական հատկանիշներ, քան նախատեսված է հրավերով: Դրա հետ մեկտեղ Մասնակցի կողմից առաջարկվել է Պատվիրատուին տրամադրել ՍԱՏԵԼԻՏ էքսպրես գլյուկոմետրեր Ստրիպ ՍԱՏԵԼԻՏ էքսպրես N 50 թեսթ երիզների շահագործման համար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը սահմանում է, որ գնման առարկայի բնութագրերը պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը: Տվյալ դեպքում «Թ 20 ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-2018/4/15/16/ՀԲ-1» ծածկագրով ընթացակարգի 8-րդ չափաբաժնով նախատեսվել է ձեռքբերել արյան մեջ գլյուկոզի մակարդակի որոշման թեսթ-երիզներ, որոնք նախատեսված են Ակկու-Չեք Պերֆորմա գլյուկոմետրի համար: Տվյալ դեպքում գնման առարկա չի հանդիսանում գլյուկոմետրը, որպես սարք, այլ արդեն իսկ շահագործվող գլյուկոմետրերի համար նախատեսված համապատասխան թեսթ-երիզները, որոնք ունեն հստակ պարամետրեր և որոնք պետք է համապատասխանեն հրավերի մեջ նշված Ակկու-Չեք Պերֆորմա գլյուկոմետրին: Մինչդեռ Մասնակցի կողմից ներկայացված թեսթ-երիզները չեն կարող դիտարկվել որպես համարժեք հրավերի տեխնիկական բնութագրի 8-րդ չափաբաժնի համար նախատեսված գնման առարկային, քանի որ վերջիններս ունեն այլ տեխնիկական հատկանիշներ և նախատեսված են այլ (ՍԱՏԵԼԻՏ էքսպրես) գլյուկոմետրերի համար, ինչը նաև հաստատվել է Պատվիրատուին ուղղված Ա/Ձ Վիկտոր Ջլավյանի համապատասխան գրությամբ:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ա/Ձ Վիկտոր Ջլավյանի կողմից Ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին: Ինչ վերաբերում է Մասնակցի այն պնդմանը, որ վերջինիս կողմից տրամադրվում են նաև ՍԱՏԵԼԻՏ էքսպրես գլյուկոմետրը՝ Ստրիպ ՍԱՏԵԼԻՏ էքսպրես N 50 թեստ երիզների շահագործման համար, ապա տվյալ դեպքում հրավերով ի սկզբանե Պատվիրատուի կարիքին համապատասխան հստակ սահմանված է եղել գնման առարկան և գնահատող հանձնաժողովը հայտերի գնահատումն իրականացրել է հրավերի պահանջների նկատմամբ:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ Ա/Ձ Վիկտոր Ջլավյանի կողմից 26.06.2018թ. ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ մերժելով Մասնակցի հայտը, գնահատող հանձնաժողովը գործել է իրավաչափ»:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Վիկտոր Ջլավյան Ռաֆիկի» Ա/Ձ-ն, հայտի թիվ 4 հավելվածով հայտարարելով և հավաստելով, որ «Թ 20

ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-2018/4/15/16/ՀԲ-1» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին, և պարտավորվելով առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «Թ 20 ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-2018/4/15/16/ՀԲ-1» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների) անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր), խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ առկա է «Վիկտոր Ջլավյան Ռաֆիկի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված հիմքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1.ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.05.2018թ. թիվ 03/26-3/9123-18 գրությամբ 26.06.2018թ. թիվ 03/26-3/11653-18 գրությամբ «Վիկտոր Ջլավյան Ռաֆիկի» Ա/Ձ-ին /ՀՎՀՀ 83353874/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Վիկտոր Ջլավյան Ռաֆիկի» Ա/Ձ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ